

## ՀԱՅՐԱՎԵԱԿԱՆ

ԴԱԿՈԲ ՔՅՈՍԵՅՑԱՆ  
Բանասիրական գլուխոթյունների թեկնածու

**ԹԵՇՈՒՆՑՈՒՄ ԱՆԿՅԱՆ-ՐԱԶՈՒ ճԱՄԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՎՄԱՆ-ԹՅՈՒՆ**

Սովորական Երուսաղեմացու (+641/644 թ.) կողմից «Սոլոր» (ծ և այօւ թեօձօտօ) բնչակված<sup>1</sup> Ամելյուդիայի Թեոդոսոս Եպիսկոպոս իր գործուն մասնակցությունն է բերել Եփետոսի տիեզերաժողովի (431 թ.) աշխատանքներին՝ համեմա գալով իրեւ կյուրելյան վարդապետության անձնիր պաշտպան։ Եփետոսի ժողովի արձանագրություններում զետեղված են Արա՝ այդ ժողովում խոսած ճառերը, որոնք նվիրված են Քրիստոսի Ծննդյանն ու գոված ընդուն Նևատորի<sup>2</sup>։ Նկատի ունենալով Թեոդոսոսի քրիստոսաբնական հայտնի դիրքորոշումը՝ Հայ Եկեղեցու դավանական մաքրությանը նախանձաւնդիր թարգմանիչ հայրերը պատշաճ են Ակատել հայացնել Արա՝ Քրիստոսի Ծննդյան նվիրված երկու ճառերը<sup>3</sup>։ Ա ճառը բովանդակող ՄՄ թիվ 7725, 993 ձեռագրերը (որոնք ճառիս հայերեն թարգմանության հնագույն ընդօրինակություններն են բովանդակում)<sup>4</sup> բնագիրը ներկայացնում են մասնակի բացթողումներով (տե՛ս «Տարղնթերցումներ և ծանոթագրություններ» բաժինը), մինչեւ ԺԶ դ. ընդօրինակված 2594 ձեռագիրն այն ներկայացնում է լրիվ և անխաթար ներպառ։

Ηαξ ψεραρέτρους ήταν διαηκόνος, από την περίοδο 1252-7225, ο οποίος στην περιοχή της Κύπρου έγινε γνωστός ως ο «Επίσκοπος της Κύπρου». Το όνομά του ήταν Ανδρέας Λαζαρίδης, ο οποίος ήταν ο πρώτος Επίσκοπος της Κύπρου μετά την αποτίναξη της Βασιλείου της Κύπρου από την Οθωμανική Αυτοκρατορία. Η θαυματουργία του Ανδρέα Λαζαρίδη ήταν η ιατρική του δραστηριότητα, η οποία έφερε πολλές θεραπείες σε ασθενείς από την Κύπρο και την Ανατολική Μεσόγειο.

<sup>1</sup> Shiu Phot, Bibl. cod. 231:

<sup>2</sup> Նրա Նրկների մագլենագիրությունը գրանցված է CPG 6124-6141:

<sup>3</sup> Migne PG, t. 77, col. 1349-1369, 1369-1385, CPG 6125, 6126:

<sup>4</sup> Ծաղկուիր ժողովածուների մաքենապիտական հակառանայից Ակարագրությունը գլւն M. Van Esbroeck, Zanetti, Le Manuscript Erevan 993. Inventaire des Pièces, REA, 1977, t. XII, M. Van Esbroeck, Répertoire de l'homélieaire du Mus. REA, 1984, t. XVIII.

ձանազղված են «Տարդնեղումներ և ծանոթագրություններ» բաժնում) մինչև վերջընթեր մասի և ու ու պահանջված է այս օ մուօցենէ թեծ լոց տա ու խաթղաթնոտ ներառ կարստի համար եղան, այսպէս և Աստուած-Բանն զբեկուղուն կիրսն իր արարեալ գոյ): Մրամից հետո հունարեն վերջընթեր մասի ճակա ունու աշուր օ քարաւարական սակրէ համեմատ ըստ գոյութեանն Հայր ամենային եղբարց նմանեալ... Ամէն»<sup>6</sup>, որն ամենայն հավանականությամբ պատկանում է վարդապետական հմտություն ունեցող գրչին: Մինչդեռ վերջընթեր մասի հայերեն թարգմանությունը ձեռագրում ներկայացնում է հունարեն բնագրի ճշգրիտ պատկերը:

Ելեղով ճառերի բովանդակությունից և թարգմանության լեզվաբնական առանձնահատկություններից՝ պետք է ենթադրել, որ դրանք հայացվել են Հ-Ը դո., քրիստոսաբանական վեճերի սաստկացման շրջանում: Թերեւս առաջին անգամ լինելով՝ Թեոդորոսից վկայություն է բերված Ստեփանոս Սյունեցու (+735) «Վասն անապականութեան մարմնոյն» դավանաբանական գրության մեջ: Սա ինքնին նշանակում է, որ Թեոդորոսի երկերը հայերեն թարգմանվել են Հ դարի առաջին քառորդին կամ դրանից առաջ: Մյուս կողմից՝ ակնհայտ է նրա և Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու նշանավոր «Պարապմանց գրքի» հայերեն թարգմանության լեզվաբնական ննդիմարությունը<sup>7</sup>: Ինչպես հայտնի է, Պարապմանց գիրքը հայացվել է 714-715 թթ. Ստեփանոս Սյունեցու շաներով: Այս փաստերը հիմք են տալիս ենթադրել, որ Թեոդորոսի ճառերը հայերեն են թարգմանվել Ստեփանոս Սյունեցու կողմից:

Նկատի ունենալով հետինակի քրիստոսաբնական դիրքորոշումը, հայ դավանաբանական մատենագրության մեջ վկայակոչված են տարբեր հատվածներ նրա ներկայացվող ճառերից: Ինչպես նկատվեց, Թեոդորոսի երկերից մի հատված վկայակոչված է Ստեփանոս Սյունեցու «Վասն անապականութեան մարմնոյն» դավանաբանական աշխատության մեջ: «Թէոդի եպիսկոպոս Անկիրիայ» անոնվ այստեղ գետեղված հատվածը («Արա յալտնեցաւ այսաւը Աստուած ի Կուսէ, և Կոյսն մնաց կոյս անարատ, զի որ առանց անապականութեանն էր՝ զապականութիւն ոչ գործեաց, և որ ստեղծիչ անմահութեանն, զոք ոչ ապականէր»<sup>8</sup>) քաղված է Թեոդորոս Անկիրիացու Բ ճառից: Այս իմաստային վերապատումն է ճառի «Արդ, երեւեցաւ այսաւը Աստուած ի ձեռն Կուսի, և Կոյսն մնաց կոյս եւ մայր եղեւ, քանզի անապականութեան առթողն ապականութիւն ոչ գործէ, Արարիշն Անմահութեան ոչ ինչ ապականեաց» (57-60 տարդնթ. միջն) տողերի:

Հովհաննես Սարկավագի (+1129 թ.) «Յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլեալլ ժամանակս յարանց բղջախոհաց» խորագրով մեծարժեք երկում Թեոդորոսի Ա. ճառից բերված է մի հատված («Ըստ որում Թէոդոսն այն ասէր. Զիա՞րդ Պատղոս առ Եբրայնցոցն թղթի անդ ասէ. «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսաւը նոյն եւ յախտեանս, երեկ կոչէ

<sup>6</sup> Այս գերեզմանության մեջ պատկանությունները և ծանոթագրությունները բաժնում:

<sup>7</sup> Տե՛ս ՆԲՀ, Բ, 19 129 (հրազդական):

<sup>8</sup> Տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյան, «Կայագիրական ուսումնասիրություններ», զիրք Բ, աշխատ. պոտՓ Պ. Հ. Հակոբյանի, Ս. Էջմիածին, 1998, 19 205:

յանցեալն, իսկ պատր զներկայն եւ յախտեան՝ զապառնին անվճար ժամանակ. զի պատր ասացից, քանզի երեկն ասէ մինչ դեռ ոչ էր զգեցեալ մարմին եւ ուներ զաստուածավայերու փառան եւ զանապականութիւն, սոյնպէս եւ այսար յորժամ մարդ ըստ ճշմարտութեան եղեւ եւ ոչ ինչ ի բնութիւն վեստեալ ոչ ապականութիւն զգեցալ կամ անկատարութիւն կամ անփառութիւն, այլ եկաց մնաց որ ինչ էրն...»<sup>9</sup>, որ իմաստային վերապատումն է հետևյալ բառերի. «Որպէս եւ մեծն Պատրոս ասաց, զի «Ցիոնու Քրիստոս երեկ եւ այսար նոյն եւ յախտեան»: «Երեկ եւ այսար» ասաց սկիզբն ժամանակի առեալ, «նոյն եւ յախտեան»: «Մի եւ զնոյն» ասելով զյախտեանական Աստուած եւ ի ժամանակի սկսեալ մարդ, զի խոստվանեսցոր զնոյն հնքն Աստուած եւ մարդ. է ինչ, որ գոլով լառաջազոյն եւ է ինչ, որ ինչ ոչն էր» (142-149 տարղներցումների միջև): Թեոդորոսի Ա ճառի «Եւ զայտաիկ խոստվանեցին ընդ մեզ ամենեքեան, քանզի անմարթ է համանգամայն պահել զմիառութիւն քան զիրաքանչիւր ոք առանձին տեսամել, այլ միաւրեալն անլուծանելի է» (136-140 տարղներ. միջև) հաստված մասամբ վկայաբերված է Պողոս Տարղնեցու (+1123 թ.) «Ընդդէմ Թեոփիհատեա Հոռոմ փիլիսոփայի» երկում<sup>10</sup>: Այս խմբագրումով վկայաբերված է նաև Վարդան Այզեկցու «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» երկում. «քանզի միացեալ ոչ երկու, այլ մի անուանի ... ոչ լուծեալը ի զմիմնան»<sup>11</sup>:

Այզեկցու դավանարանական այս աշխատության մեջ վկայաբերված մյուս քաղվածքը («Անկարեկի է դիտել զյատկութիւնն եւ պահել զմիութիւնն ... եւ մի՛ քննելոց եղեալն, ոչ մնայ հրաշափառ Բանն, եթէ ճանաչի կամ հասու լինի ի մէնց»)<sup>12</sup> խմբագրում-համակցումն է Ա ճառի հետևյալ տեղիների. «ապա ուրեմն եւ մտածութեամբք զմիաւրութիւնն բաժանես... երկուս իմանալով եւ զմիառութիւն արհամարիելով» (141-142 տարղներ. միջև) «ոչ մտածութեամբ անշատեալ եւ ոչ բանիւր զմիաւրեալն որոշել կամեցեալ» (248-249 տարղներ. միջև), «Եթէ միաւրես բանիւ մի՛ որոշէր մտածութեամբ՝ զմիառութիւնն ուրացար... քանզի ոչ մնա սքանչելի, որոյ սահմանն ճանաչի, եթէ եղելոյն ծանալը է սահման» (386-387 տարղներ. միջև):

Թեոդորոս Անկյուրացին իր արժանավոր տեղը պետք է զբաղեցներ նաև հետագայի հայ դավանական գիտակցության մեջ: Այսպես. Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու «Պարապմանց գրքի» լուծմունքը պարունակող ձեռագրերից մեկում Լուծմունքին կից գետեղված դավանարանական հարցուատասահմանի մեջ առկա են մասնավոր հարցումներ, որոնք վերաբերում են Թեոդորոս Անկյուրացու ճառերին. «Իսկ կրկին ճառը սրբոյն Թէոդորի Անկիմացոյ. Առաջինն է վասն անքակտելի միաւրութեամբ Բանին մարմնացելոյ, եւ երկ-

<sup>9</sup> Տե՛ս ՄՄ ձևո. 6453, թ. 198թ:

<sup>10</sup> «Թուղթ երամակոյն Պողոսի Տարղնեացոյ յաղթօռ ախոյնան վարդապնդի՝ ընդդէմ Թեոփիհսքեայ Հոռոմ փիլիսոփային», Կ. Պոլիս, 1752, լ. 163:

<sup>11</sup> Վարդան Այզեկցու, «Գիրք հաստագրութեան և արմատ հաւատոյ», թեսական թանգիր կազմոց ծանելին. Հարցավավոյանը, Եր., 1998, լ. 149: Ի դեպք, Վարդան Այզեկցու այս աշխատության «Նկրածություն» բաժնում թեոդորոսի կրկերից բաղված հարվածները թյուրիմացարար ներկայացրել և մի իրեն վկայություններ՝ թըրված թեոդորոսի կյուրացու (386 /393-457) կրկերից, թե՛ս անդ, լ. 50:

<sup>12</sup> Այս, լ. 148-149:

րորդմ՝ վասն աճշփոր մնալ յատկութեամբ բնութեանցն ի նոյն միութեան: Հրց. ի լերկողորդ ճառէն. Որպէս քանա անմարմին մարմին եղեւ: Պտխ. որպիսութիւնն անգիտելի է...: Այսպէս սուրբ Թէոդորոս Ամկիւրացի»<sup>13</sup>:

Թարգմանական այս երկերն օգտակար են հայ ինքնուրուց մատենագրության ու արվեստին վերաբերող վարդապետական, մշակութային կարգի մի շարք իրողություններ և օրինաչափություններ բացահայտելու տեսակետից: Այսպես, Բամի մարմացման խորհուրդը առավել առարկայորեն ներկայացնելու նպատակով Բ ճառում Թէոդորոս Ամկիւրացին բերում է հետևյալ օրինակը. «Այդ, յորժամ զբանս զայս, զոր Քոհնդ ծնան միտք ներքադրեալ կամիցին տափուր եւ գրով, եւ տպատրել կամիցին ի քարտեսմ՝ ո՞չ ապաքն ձեռամբ գրես զնա եւ արինական իմն դարձեալ ի ձեռն ձեռին ծնանիս զբան»: Ձեռքով խոսք ծնելու վերաբերյալ նկարեն այս պատկերը համերաշխ է Կորյունի «Վարք Մաշտոցի», «հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոց եւ սքանչելի՝ սուրբ աջովն իրով, նշանագիրս հայերէն լեզուին»<sup>14</sup> արտահայտությանը, որը դրսերում է տվյալ ժամանակաշրջանի աստվածաբանական մտածողության ընդհանրությունը: Քրիստոսաբանական նպատակ հետապնդող թերողուսոյան համեմատությունն օգնում է թափանցել Կորյունի արտահայտության վարդապետական ներախորի մեջ: Ըստ այս, ինչ հարաբերություն որ կա մտքի և նրա ծնունդը համեխսացող տափի կամ խոսքի միջև, նոյնն առկա է Հայր Աստծո և մարմացած Որդու միջև: Աստվածաբանական լեզվամտածողության մեջ առկա այս աղերսը այժմ օգնում է ճիշտ ընկալել հայտնութենական այն կարևորությունը, որ Կորյունը վերապահում է գրոց զյուտին:

Ա, ճառն օգտակար է մանրանկարչության աստվածաբանության հետազոտման համար: «Մոգերի երկրպագություն» պատկերի վարդապետական ակունքների, իմաստաբանության բացահայտմանը նպաստամատուց է ճառի այն դրվագը, որը հեղինակը հավանաբար աչքի առջև ունենալով Ս. Գրիգոր Նազիանզացի-Աստվածաբանի «...ընդ աստեղն ընթանայ, ընդ մոգսն ընծայաբեր՝ ոսկի եւ կնդրուկ եւ զմուռ՝ իբրև թագաւորի եւ իբրև Աստուծոյ, եւ որպէս յաղագս քո մեռելոյ ընդ հովհանն փառաւորեալ» խորհրդածությունը<sup>15</sup>, բացատրում է նորածին Հիսուս մանկանը բերված ընծաների խորհրդական բովանդակությունը: Այստեղ կարդում ենք. «Ի Քաղիշացոցն լեալը, որպէս ասէ Աւետարամիշն, եւ նորումք ընծայեալըն ընկալան զխորհրդոյն զարութիւն բարբարոսացն բարտք տեսալ, վասն զի երիս տեսակս ընծայից մատուցին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս... ոսկի, զի թա-

<sup>13</sup> Տե՛ս Հ. Յակովոս Վրդ. Տաշնան, Ցուցակ հայերէն ձևագրաց Մատինաստարանին Մշխիթարևանց ի Վիեննա, Վիեննա, 1895, լ. 454: «Թէնողուրովի» անունով մի քանվածք («Քանզի վիսնեա զքնզ, այսինքն՝ զգողովարանն կրապաշտութեան՝ արևամբ զանկնապն, և գարին զոհիցն ի գիրկս ընկյանապ թոյ և պոտ զոհել ոչ կոոց, այդ ինձ: Եթէ ողակվել ից, պատրապն նորս յաջաջայ արու անարաք մատուցը: Առ դորս խորակին վկայութեան անց, զնս ընդունելութիւն ի նման:» առ ի քանոյ առաջի Տե՛սան» զնսդղված է. Նեփիկոնի մի անանուն խմբագիր մնկնության մեջ (գլուխ «Մատինան զիդութեան և հայագոյ Դարթի բահանայի» հայերն հենազոյն թղթայ ձևոազիր 981 թ., աշխար. Ա. Ա. Մաթինոսյանի, Եր., 1997, լ. 473): Սակայն այն բացակայում է, թէնողուրովի ներկայացվող ճառություն: Հարկ է ներադրել, որ այդ հայրածքը վկայաբնրված է, թէնողուրովու Կյուրացու Ութամապյանի մնկնությունից, գլուխ և հմնվ. PG, լ. 80, col. 76-528:

<sup>14</sup> Տե՛ս Կորին, Վարք Մաշտոցի, աշխար. Ա. Արևոյանի, Եր., 1981, լ. 96 (Հ):

<sup>15</sup> Տե՛ս Ս. Գրիգորի Աստվածաբանի ասացեալ ի Ծնունդն Քրիստոսի, ՄՄ, ձև. 946, թ. 1ա:

գաւոր էր պատուեալն, կնդրով, զի Աստուած էր ծնեալն: Քանզի զայսոսիկ մատուցանեին ըստ սովորութեանն ի նոցան կարծեցեալ աստուածոցն: Մատուցանեին և զմուռ զշար-չարան մահու, որպէս վարկանիմ, նշանակելով այսուիկ» (122-132 տարղնք. միջև):

Ընձաների խորհրդաբանական այսօդինակ մեկնությամբ<sup>16</sup> ճառագիր հեղինակը փոր-ձնու է ցուց տալ Քրիստոսի աստվածային բնության անփոփոխելիությունն ու մարդեղո-թյունը՝ հաստատելով, թե ևս «Աստուած մնաց և մարդ եղեւ՝ ընկալեալ զման»: Ընձաներն ակնարկում են Քրիստոսի երեք հատկությունները. ուսի՛ թագավորությունը, կնդրովը՝ աստվածային բնությունը, զմուռը՝ մարդեղությունը, որը մատնանիշ է անուս չարչարանքն ու մահը: Հայ մեկնաբանական ավանդությունը որդեգրում է այս խորհրդաբանությունը: Այս-պես ԺԱ. Դ. մատենագիր Անանիա Սամահնեցին իր Մատթեի Ավետարանի մեկնության մեջ գրում է. «Եւ զի աս՝ մատուցին Նմա ոսկի իբրեւ Թագավորի և կնդրով՝ իբրեւ Աստու-ծոյ և զմուռ՝ իբրեւ մահկանացուի»<sup>17</sup>: Հստ այսմ, աստվածաբանորեն վերածնելով ընձա-ների խորհրդաբանությունը՝ հայ մեկնիչները դրանք նկատում են Քրիստոսի երեք պաշ-տոնների՝ թագավորության (ոսկի), Մարգարետյան (կնդրով) և Քահանայության (զմուռ) նշանակները<sup>18</sup>:

Հակառակ այն իրողության, որ «Նոր Հայկագեան» բառորդի հեղինակներն օգտագոր-ծել են Թեոդորոսի ճառերի հայերեն թարգմանության բառագանձը<sup>19</sup>, պյուինաներք ներ-կայացվող ճառերում կան այնպիսի բառամիավորմեր, որոնք տեղ չեն գտել այդ բառարանում: Դրանք են. անփոխադրապէս (=ամետաթլήտա [1353Ա]), առաելաբանել, (=՞ սուբթոլի [1381Ա]: գետնակա (=օ ծօնլօս [1380 Ա]), գյելեռուտ (=εնտιածօն [1377Դ]), դիրագմի (=εնաւուն [1384Բ]), լնդիմագաւուել (=կատառալաւսու դիթելուսուն [1381Դ], հեռասահմանել (=՝ էջօրիսօն [1380Ա]), մերձակրութիւն (=պարόնտօս [1369Բ]), նախաչեղեալն (=տօն պրօքէմուն լոցուն [1377Բ]), նախամտածութիւն (=պրօւնուսուն [1376Դ]), չարահաւանութիւն (=տդ պրօլիքւ էջօրիսօն [1380 Բ]):

Ճառերի հայերեն թարգմանությունների քննական բնագրերը ներկայացվում են համա-ձայն Մաշտոցի ամվ. Մատենադարանի հետևյալ ձեռագրերի:

7729- Ճառընտիր: ժամանակ՝ 1200-1202 թթ.: Վայր՝ Ավագ վանք (Երգնեկա): Գրի՛ Վարդան քմն. Կարմնեցի: Մաղկող՝ Ստեփանոս: Կազմող՝ Ստեփանոս (1205 թ.), հետագա Կիրակոս Վրդ. Աղենցի (1828 թ.): Ստացող՝ Պատրիոն Աստվածատուր ուալիս Բարերդի:

<sup>16</sup> Միևնու Ս. Շովիան Ռուկերանի մեկնաբանությամբ զմուռը ևս ակնարկում է. նորածին մասնկան ասպ-վածությունը. «Եւ պատրաքս ոչ իբրև մարդոյ, այլ իբրև Ասքունոյ, բանզի կնդրուկն և զմուռ այն եշանակիք ևն». լրեն Անկարանագիրն Մադրելու, Վենեպիկ, 1826, լ. 112:

<sup>17</sup> Տե՛ս «Գանձաար», ասպրուածաբանական հանդիւ, Ե, 1994, լ. 253:

<sup>18</sup> Ասպրածաբանական վերացարկումվ Սանահնեցին հարում Ե. «Նարձնապ ոսկի, զի դառնապու և կրկուա-գութիւն պատկերի ուկոյն՝ Տեսան ուկոյն, և զմուռ՝ իբր թժկի, զի թժկելու Ե. ևս գրեկումն Աղամայ, և կնդրով. զի հոդ անուշից, որ բորիսա ի նման, կոյդ հոդու մահու, որ բորիսա Աղամայ...» («Գանձաար», Ե, լ. 253): Բա-ցարդրության հնդ համբաշխվում ևս Ս. Նիրսն Շնորհապու հնվելյա բաները. «Եւ կնդրուկն, բանզի անուշանուր և եշանակիքն, զի հոդովն անուշից, որ ի նման, լուծամելու լր հոդն մահու, որ բոյնաց ի յաձլւ: Խկ զմուռն, զի Ե. ևս թժկական, յայս արարին, զի թժկելու լր նա գրեկումն Աղամայ». լրեն «Սկզբութիւն Սուրբ Անկարա-նին, որ բու Մադրելուի՝ արարին ի Սրբոյն Ներխսի Շնորհապու...», Կ. Պոլիս, 1825, լ. 44:

<sup>19</sup> Տե՛ս ՆԲՀ, Բ, լ. 388 (Ասպրածաբանում):

Թերթ՝ 603: Նյութ՝ մազաղաթ: Մնացություն՝ 70,5 x 55: Գրություն՝ եռայլուն: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Տող՝ 45:

1525- Ծաղընտիր: Ժամանակ՝ ԺԳ դ.: Գրիչ՝ Հովհաննես, Գևորգ: Ստացող՝ Հովհաննես (զրիչը): Թերթ՝ 523: Նյութ՝ թուղթ: Մնացություն՝ 47x33,5: Գրություն՝ երկայն: Գիր բոլորգիր: Տող՝ 33-36:

993- Ծաղընտիր: Ժամանակ՝ 1456 թ.: Վայր՝ Վերին Նորավան: Գրիչ՝ Մատթեոս: Մաղկող՝ Եսայի: Ստացող՝ Թաղետու, Ստեփանոս Եղբարք: Թերթ՝ 769: Նյութ՝ թուղթ: Մնացություն՝ 34x25,5: Գրություն՝ երկայն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 44:

2594- Ժողովածու: Ժամանակ՝ ԺԶ դ.: Գրիչ՝ Հարություն: Թերթ՝ 205: Նյութ՝ թուղթ: Մնացություն՝ 26x20: Գրություն՝ երկայն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 50<sup>20</sup>:

<sup>20</sup> Նկարագրությունն ըստ՝ Ցուցակ ձևագրաց Մաշտոցի անվան Մագլեսադարանի, Հր. Ա. Բ. կազմեցին Օ. Եզակյանը, Ա. Ջեթույսյանը, Փ. Ամբարյանը, Խմբագրությամբ Լ. Խոսհիկյանի, Ա. Մնացականյանի, Եր., 1965, լ. 454, 575, 833, 1970, լ. 597-599: